Հավելված N 1
ՀՀ վարչապետի N 704 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Խորհուրդը կազմված է նախագահից և խորհրդի անդամներից:

2. Խորհրդի կազմում քվեարկելու իրավունքով ընդգրկվում են հետևյալ անդամները՝

1) Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ՝ հարկաբյուջետային քաղաքականության ոլորտը համակարգող (խորհրդի նախագահ) կամ իր մասնակցության անհնարինության դեպքում իր հանձնարարությամբ հանդես եկող այլ ներկայացուցիչ.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար կամ իր մասնակցության անհնարինության դեպքում իր հանձնարարությամբ հանդես եկող այլ ներկայացուցիչ.

3) խորհրդի տվյալ նիստում քննարկման ենթակա բյուջետային ծրագրերի իրականացման համար պատասխանատու մարմինների ղեկավարներ կամ իրենց մասնակցության անհնարինության դեպքում իրենց հանձնարարությամբ հանդես եկող այլ ներկայացուցիչներ:

3. Խորհրդի աշխատանքներին առանց քվեարկելու իրավունքի մասնակցում են՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը կամ իր մասնակցության անհնարինության դեպքում իր հանձնարարությամբ հանդես եկող այլ ներկայացուցիչ.

2) բյուջետային գործընթացը համակարգող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալը կամ իր մասնակցության անհնարինության դեպքում իր հանձնարարությամբ հանդես եկող այլ ներկայացուցիչ:

4. Խորհրդի աշխատանքներին մասնակցելու նպատակով (առանց քվեարկելու իրավունքի), անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել՝

1) բյուջետային ծրագրերի իրականացման համար պատասխանատու մարմինների այլ ներկայացուցիչներ.

2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահը կամ փոխնախագահը.

3) տեսչական մարմինների ներկայացուցիչները՝ ըստ քննարկման առարկա հանդիսացող բյուջետային ծրագրերի ոլորտային պատկանելության.

4) ոլորտի անկախ փորձագետներ.

5) մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, միջազգային ֆինանսական կառույցների և զարգացման գործընկերների ներկայացուցիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ